



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԺԸՆԵՎԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

**Վ Ա Ջ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Ք Բ Ի Ս Տ Ո Ս Ի,
Ո Ղ Ո Ր Մ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ե Ն Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ Ե Ի Կ Ա Մ Օ Բ Ե Ն Ա Ջ Գ Ի Ս
Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Պ Ե Տ Ե Ի Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Ց Ո Յ,
Ծ Ա Յ Բ Ա Գ Ո Յ Ն Պ Ա Տ Բ Ի Ա Բ Ի Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Կ Ա Ն Ն Ա Խ Ա Մ Ե Ծ Ա Բ
Ա Ք Ո Ւ Ո Յ Ա Յ Բ Ա Բ Ա Տ Ե Ա Ն Ա Ռ Ա Բ Ե Ն Ա Կ Ա Ն Մ Ա Յ Բ
Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ Ս Բ Բ Ո Յ Կ Ա Ք Ո Ւ Ղ Ի Կ Է Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի**

Ք Բ Ի Ս Տ Ո Ս Ա Ե Ն Կ Ս Ի Բ Ո Յ Ո Ղ Ջ Ո Ւ Յ Ն Ե Ի Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Հ Ա Յ Բ Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն
Պ Ա Տ Ո Ւ Ա Ր Ժ Ա Ն Ա Ն Կ Ա Մ Ո Յ Շ Ի Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Յ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ Ն
Հ Ա Յ Ո Յ Ո Ր Ի Ժ Ը Ն Ե Ի, Հ Ա Բ Ա Ջ Ա Տ Ո Ր Գ Ի Ո Յ Մ Ա Յ Բ Ա Ք Ո Ւ Ո Յ Ս Բ Բ Ո Յ Կ Ա Ք Ո Ւ Ղ Ի Կ Է
Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի

Մեծ ուրախությամբ կողջունենք և կօրհնենք Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսայի հայոց բարեխնամ առաջնորդ գերապատիվ Տ. Սերովբե եպիսկոպոսի պատվո նախագահությամբ կազմված հարգարժան հանձնաժողովիդ աստվածահանո և ազգաշեն ձեռնարկը, ժրնևի խաղաղ ավերում վրա, հայ նարտարապետական ոճով, հայկական նոր եկեղեցի մը կառուցանելու համար, ի մխիթարություն Մեր հավատացյալ զավակներուն:

Սիրով կողջունենք և կօրհնենք մանավանդ լուրջնաբնակ այն ազնվաճոգի բարերարը, որ Անգլիո Մեր Հայրապետական բարեշան պատվիրակ գերաշնորհ Տ. Պապի եպիսկոպոսի միջոցով, Ձեզ կտրամադրե եկեղեցական շենքի կառուցման ծախքերը:

Ի սրտե կողջունենք և կօրհնենք նաև այն նվիրատուները, որոնք, ընդառաջելով պատվարժան հանձնախումբիդ կոչին, պիտի փութան իրենց լուծանքերը Ձեզ հասցնելու, որպեսզի Դուք անհապաղ կերպով կարենաք ունենալ ժրնևի մեջ հայկական նոր եկեղեցվո շինության հողը, և կարենաք հայթայթել եկեղեցվո ներքին կահավորման և բարեգարդման ծախքերը:

Մեր Սուրբ Եկեղեցիին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար, հայ ֆրիտոնեական հավատաբի հաղթանակի օր պիտի ըլլա այն առավոտը, երբ առաջին

անգամ, Չվիցերիո օրհնյայ երկրի բարձունքներեն պիտի հնչեն զանգակները հայ եկեղեցիին, անգամ մը ևս ավետելու համար աշխարհին, թե Սփյուռքի մեջ այ կենդանի է հայության ոգին և վառ է Սուրբ Լուսավորչի կանթեղը:

Ժրհեկի նորակառույց հայ եկեղեցվո շինության պատվարժան հանձնախումբիդ կմաղթենք անսպառ ուժ և եռանդ, որպեսզի մեկտեղեմք Ժրհեկի հայ համայնքը նոր եկեղեցվո շինության ձեռնարկի շուրջ, և սիրով միաբան, հիմնեմք, գորագնեմք և ծաղկեցնեմք Ձեր եկեղեցին, որպես Տուն աղոթից ամենայն հավատացելոց և ամուր կովան ազգապահպանման:

Հանձնախումբիդ ձեռնարկներուն կմաղթենք լիակատար հաջողություն, ի փառս Աստուծո և ի մխիթարություն հավատացյալ հայ ժողովուրդի:

Աստվածակառույց Սուրբ էջմիածնեն, նոր եկեղեցվո շինության հանձնախումբի բոլոր անդամներուդ և Ժրհեկի ու Չվիցերիո համայնքի Մեր սիրեցյալ բոլոր գավակներուն հայրական սիրո ողջո՞ւյն և օրհնություն և հայրապետական:

«ԱՅՍՈՒՀԵՏԵԻ ԶՕՐԱՑԱՐՈՒՔ ՏԷՐԱՄՔ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄՔ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՆՈՐԱ» (Եփես. Զ 10): Ամեն:

Վաչյան Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԵՎ ԿԱՌՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 26-ն յունուարի
1961 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺ,
ի վանս Սրբոյ էջմիածնի: